Արձանագրության 4
Երևանի հհ.26,70,91,114,160 մանկապարտեզների համար գույքի ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

19.10.2017թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Սարգսյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ժ. Ղարդաշյան /գնահատող/, Ա.Գաբրիելյան/գնահատող/, Լ. Մարտիրոսյան /բացող/, Փ. Շահմուրադյան/բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ն. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ն. Սարգսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակցի մասին

(Ն. Սարգսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

-2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ -ն:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ն. Սարգսյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **Երևանի հհ.26,70,91,114,160 մանկապարտեզների համար դեղորայքի պահարանների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին :

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ն. Սարգսյան
Անդամներ՝ ---------- Ժ. Ղարդաշյան
---------- Ա.Գաբրիելյան
---------- Լ. Մարտիրոսյան
---------- Փ. Շահմուրադյան
Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան